ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<10>> հունվարի 2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 17/14-Ա

Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Զաքարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների անհատ ձեռնարկատեր Հասմիկ Զաքարյանի (ՀՎՀՀ 78622356, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ ք. Քաջարան Խանջյան 6-35, պետ. գրանցման համարը՝ 72.01863) <12> դեկտեմբերի 2018 թվականի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունը կազմել է 399.369 դրամ, որից ապառք՝ 164.368 դրամ, տույժ՝ 94.201 դրամ,տուգանք՝140.800 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին <13> դեկտեմբերի 2018 թվականին ԱՁ Հ.Զաքարյանը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և նշվածի վերաբերյալ որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ տնտեսական դատարանը 03.04.2007 թվականին թիվ S5-146-2007թ. քաղաքացիական գործով վճիռ է կայացրել ԱՁ Հասմիկ Զաքարյանից 260.000 դրամ գանձելու մասին, որի մեջ ներառված է եղել պարզեցված հարկ՝ 60.000 դրամ (ապառք՝ 55.800 դրամ, տույժ՝ 4.200 դրամ), ՀԴՄ տուգանք՝ 200.000 դրամ (90%՝ 192.500 դրամ, 10%՝ 7.500 դրամ): Վճարվել է 59.200 դրամ տուգանք:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է **198.569 դրամ**, որից՝

ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունը կազմում է **109.563 դրամ**, որից ապառք՝ 70.800 դրամ, տույժ՝ 38.763 դրամ,որն առաջացել է 2005 թվականի 3-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի հաշվարկից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

եկամտահարկի գծով պարտավորությունը կազմում է **4.644 դրամ**, որից ապառք՝ 3.000 դրամ, տույժ՝ 1.644 դրամ,որն առաջացել է 2005 թվականի ապրիլից-սեպտեմբեր ամիսների եկամտահարկի հաշվարկներից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

պարզեցված հարկի գծով պարտավորությունը կազմում է **81.775 դրամ**, որից ապառք՝ 33.100 դրամ, տույժ՝ 48.675 դրամ,որն առաջացել է 2005 թվականի 2-րդ եռամսյակի պարզեցված հարկի հաշվարկից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը կազմում է **2.587 դրամ**, որից ապառք՝ 1.668 դրամ, տույժ՝ 919 դրամ, որն առաջացել է 2006 թվականի դեկտեմբեր ամսվա պարտադիր սոցիալական ապահովության վճարի հաշվետվությունից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Պարտադիր սոցիալական ապահվության վճարների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ հարկը պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ

օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Զաքարյանից գանձել **198.569 դրամ** պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ Վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն Հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտ. անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ԻՎ ՀԳ բաժին,
գլխավոր մասնագետ Մ.Մաթևոսյան
հեռ.0285-4-19-84